ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի նոյեմբերի 24-ին

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԵՎ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 27. Վճարահաշվարկային կազմակերպությունների նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները, վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողության կասեցումը և ուժը կորցրած ճանաչելը

(վերնագիրը խմբ. 14.04.11 ՀՕ-131-Ն)

1. Օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար Կենտրոնական բանկը վճարահաշվարկային կազմակերպության և (կամ) վերջինիս ղեկավարի նկատմամբ կարող է կիրառել հետևյալ պատասխանատվության միջոցները՝

ա) նախազգուշացում՝ խախտումները վերացնելու հանձնարարականով.

բ) տուգանք.

գ) որակավորման վկայականից զրկում.

դ) լիցենզիայի գործողության կասեցում.

ե) լիցենզիայի ուժը կորցրած ճանաչում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի «ա», «բ» և «գ» կետերով նախատեսված պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել միաժամանակ՝ օրենքների և այլ իրավական ակտերի յուրաքանչյուր պահանջի խախտման համար:

3. Խախտումը վերացնելու հանձնարարականը պարտադիր է վճարահաշվարկային կազմակերպության համար և կարող է նախատեսել խախտումը վերացնելու որոշակի ժամկետ:

4. Վճարահաշվարկային կազմակերպության նկատմամբ նշանակվող տուգանքի չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկը, իսկ վճարահաշվարկային կազմակերպության ղեկավարի նկատմամբ նշանակվող տուգանքի չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկը, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

5. Վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան ուժը կորցրած է ճանաչվում Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:

6. Վճարահաշվարկային կազմակերպությունների և դրանց ղեկավարների նկատմամբ սույն հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները կիրառվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7. Կենտրոնական բանկի խորհուրդը կարող է կասեցնել վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիայի գործողությունը կամ ուժը կորցրած ճանաչել վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան նաև վճարահաշվարկային կազմակերպության համապատասխան դիմումի հիման վրա: Վճարահաշվարկային կազմակերպության դիմումը կարող է մերժվել, եթե լիցենզիայի գործողության կասեցումը կամ լիցենզիան ուժը կորցրած ճանաչելը կհանգեցնի ֆինանսական համակարգի ապակայունացմանը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում:

8. Կենտրոնական բանկի խորհուրդն ուժը կորցրած է ճանաչում վճարահաշվարկային կազմակերպության լիցենզիան նաև վճարահաշվարկային կազմակերպության լուծարման դեպքում:

9. «Կրիպտոակտիվների մասին» օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված կրիպտոակտիվների շուկան կարգավորող իրավական ակտերի, դրանց հիման վրա ընդունված այլ նորմատիվ իրավական ակտերի, այդ թվում՝ կրիպտոակտիներով ծառայությունների մատուցման ներքին իրավական ակտերի պահանջները խախտելու համար Կենտրոնական բանկը պատասխանատվության միջոցներ է կիրառում «Կրիպտոակտիվների մասին» օրենքով սահմանված կարգով:

(27-րդ հոդվածը խմբ. 14.04.11 ՀՕ-131-Ն)